



### ԹԱՄՄԱՄ ՍԱԼԱՄԻ ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

Երեւոյի Թամամ Սալամ երէկ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն մէջ յայտարարեց, թէ ընտրութիւնները մղած է համախոհութեան կարգախօսով: «Տեղեկատուական արշաւները վերջացած են եւ այժմ բոլոր կողմերը վերադարձած են համախոհութեան ու միասնականութեան կարգախօսին»: ըսաւ ան:

Սալամ հաստատեց, թէ ընտրական գործընթացի կազմակերպութիւնը լաւ էր եւ շնորհակալութիւն յայտնեց պետութեան: Ան նաեւ շնորհաւորեց պէյրութցիները եւ հաւաստեց, թէ առարկութիւն չունի ժողովուրդի ընտրանքին, այլ պիտի մնայ անոր կողքին ու պիտի շարունակէ ծառայել անոր: Սալամ նաեւ շնորհակալութիւն յայտնեց իրեն պօրավիզ կանգնածներուն ու ցանկակիցներուն:

Թղթակիցներու հարցումներուն պատասխանելով, Սալամ ըսաւ, որ ոչ ոք կը ջնջուի այլ բոլորը կը մնան ու կը շարունակեն գործել: Ան նաեւ ըսաւ, որ հարցը նախկին վարչապետ Հարիրիի ուղեգիրն է. «Եւ ընկալան է, որ գործադրուած միջոցներն ու կարողութիւնները տան այս արդիւնքը: Ոչ ոք կրնայ ուրանալ կամ անտեսել դրամին ակնկեցութիւնը, բայց անոր կողքին կար նաեւ տնտեսական եւ ընկերային իրավիճակին պատճառած դժգոհութիւնը»: ըսաւ ան:

### ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՍԻՆ

Արաբական Լիկայի խորհուրդը երէկ եզրափակեց իր 114րդ համագումարը եւ իր տուած որոշումներուն մէջ վերահաստատեց իր գորակցութիւնը՝ Լիբանանի, անոր բարգաւաճումին եւ հողային ամբողջականութեան գծով: Բանաձեւեր նաեւ դատապարտեց Իսրայէլը, որ բռնազրաւուած կը պահէ Լիբանանի սահմանային շրջաններ, ինչպէս նաեւ Մագադէ ՀՇՐԿԿԿԿԿ: Բանաձեւեր հաստատեց, թէ Լիբանանի իրաւունքն է բռնազրաւուած հողերու ազատագրումին համար գործածելու բոլոր միջոցները, ինչպէս նաեւ դիմադրութեան իրաւունքը: Արաբական Լիկան նաեւ միջազգային ընտանիքէն պահանջեց, որ դատապարտէ Իսրայէլը եւ ճնշում բանեցնէ անոր վրայ, որպէսզի վնասուց հատուցում կատարէ Լիբանանին:

Լիկան ընդգծեց պաղեստինցի գաղթականներու տնտեսաբար իրաւունքը, գոյուղացներով, որ այս հարցին առնչուած մնայ կը սպառնայ շրջանի ապահովութեան եւ կայունութեան, եւ խոչընդոտ է արդար եւ ամբողջական խաղաղութեան իրականացման երթին առջեւ:

Ժողովը նաեւ դատապարտեց Իսրայէլի մէջ իրանական պատանդներ արգելափակուած պահելու եւ կոչ ուղղեց միջազգային ընտանիքին՝ ճնշում բանեցնելու Իսրայէլի վրայ, ապահովելու համար անոնց ազատ արձակումը:

### ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Նազարէթ Գէորգեան եւ գաւակունք
- Տէր եւ տիկին Ինչոյան Գէորգեան եւ գաւակունք
- Տէր եւ տիկին Մաննա Գէորգեան եւ գաւակունք
- Տիար Հրանդ Չամուրեան եւ գաւակունք
- Տէր եւ տիկին Հրայր Ասիկեան եւ գաւակունք
- Տիկին Պիտիկ Պաշտման եւ գաւակունք
- Տիկին Մարտիրոս Արքայապետ եւ գաւակունք
- Տէր եւ տիկին Ժողով Գրիգորեան եւ գաւակունք
- Թոքաթեան ընտանիք
- Շիրինեան ընտանիք
- Ապաճեան ընտանիք
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց քրոջ, հորաքրոջ եւ հարազատին՝

### ՊԵՐՃՈՒՂԻ ԳԵՈՐԳԵԱՆԻ

Մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 4 Սեպտեմբեր 2000, առաւօտեան ժամը 8:00ին «Օթէլ Տիկ» հիւանդանոցին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի 5 Սեպտեմբեր, կէսօրի ետք ժամը 4:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրոն Շպակի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունելի իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիասի Սիմիոնեանի «Գեղարդ» շէնք, 9րդ յարկ, Երեքշաբթի 5, Զորքշաբթի 6 եւ Հինգշաբթի 7 Սեպտեմբերին:
- ԾԱՆՍԹ՝ - Փոխան ծաղկեպսակի, նուիրատուութիւններ կատարել Լիբանանահայ Սգևորեան Խաչի կեդրոնին:

### ՄԱՀԱԶԴ

- Տիկին Ազնիւ Մուսթաֆեան եւ գաւակունք
- Տէր եւ տիկին Պօղոս Մուսթաֆեան եւ գաւակունք
- Տիկին Ուսաննա Եհաննան եւ գաւակունք
- Տիկին Շաքի Թոգեան եւ գաւակունք
- Տէր եւ տիկին Սերոբ Գալթաֆեան եւ գաւակունք
- Տէր եւ տիկին Յակոբ Սարաֆեան եւ գաւակունք
- Գրորթեան ընտանիք
- Պէրպէրեան ընտանիք
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հոր, մեծ հոր, եղբոր, աներձագին եւ հարազատին՝

### ՎԱՐԴԻՎԱՌ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ ('Շնեալ' Պէյրութ, 1926ին)

Մահը, որ պատահեցաւ Կիրակի, 3 Սեպտեմբեր 2000ին, Լուս Անճերթի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Լուս Անճերթի մէջ:

- Ներկայ ընդունելի իբրեւ մահազոյ:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԳԵՐԻ ԴԱՐՁԱՒ

ԿՐԸՄԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՐԸ

Վարչապետ Սեյիմ Հըս երէկ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն մէջ ըսաւ, թէ ընտրութեան ընթացքին մտահոգ էր ժողովրդավարութեան, մարդոց արժանապատուութեան եւ բարոյական, ընկերային ու մարդկային արժեքներուն համար, նկատի առած, որ ընտրական ձեւաւորման լիարժեքը՝ դրամն ու հատուածական ծախսերը իրենց ապօրինի են:

«Քաղաքական գրաւոր անախընթաց տարողութեամբ գործածուեցաւ եւ ամէն բան գին ունեցաւ, հաւատարմութիւնը այլ մը դրամ կ'արժէ, մինչ ընտրական դաշտը արտուկներու շուկայ է, ուր ամերիկացի նախագահական ընտրութիւններէն աւելի մեծ

գումարներ կը ծախուին, ըսաւ Հըս, աւելցնելով, որ նաեւ անկընայ գործածուեցան հատուածական ծախսերը: Քաղաքական առժամայ շահերու համար, գիտնալով հանդերձ, որ այս «Գէնքին» միակ գոյր պիտի ըլլայ ազգային միասնականութեան եւ համակեցութեան երկիր Լիբանանը:

Հըս շարունակեց հաստատելով, թէ այս ընտրական ձեւաւորմանը Լիբանանի պատմութեան մէջ ամէնէն վայրագն ու ամէնէն կեղտոտն էր: «Գործընթացը ազատ եւ պարկեշտ էր, բայց ժողովրդավարական չէր, որովհետեւ ենթատուկներու շուկայ է, ուր ամերիկացի նախագահական ընտրութեան, այլ խօսքով, Լի-

բանանի մէջ ազատութիւնը գերի դարձաւ», ըսաւ ան:

Հըս շարունակեց, ըսելով. «Թէեւ կը փորձեն քաղաքականապէս ջնջել վիս, բայց պիտի չկարենան անունս արբել հայրենիքի իշողութենէն»:

«Անոնք, որոնք կողքիս կանգնեցան ու դրամի իշխանութեան չենթարկուեցան, ոչ ալ տարուեցան հատուածական ծախսերու թեմք, կը հաւաստեմ, թէ պիտի մնամ Պէյրութի բնակչութեան կողքին, ինչպէս միշտ, թէ՛ լաւ, թէ՛ վատ պայմաններուն մէջ», ըսաւ ան եւ աւելցուց. «Կրնամ միայն հնազանդի մարդոց վճիռն, ինչքան ալ տկար ըլլայ մեր ժողովրդավարութիւնը, եւ յաջողութիւն կը մտրթեմ բոլոր յաղթականներուն: Շուրջ քառորդ դարու քաղաքական կեանք մը հայրենիքին ծառայելէ ետք կը դարձնեմ կեանքիս այս էջը եւ Պէյրութի հարապատներուս կը քննեմ, շնորհակալ եմ»:

Թ ղ թ ա կ ի ց ն է ռ ու հարցումներուն պատասխանելով Հըս հաստատեց, թէ ընտրական օրէնքը չէր այս իրապարտութիւններուն պատճառը, թէեւ անհրաժեշտ է բարեփոխել պայմանները:

Հըս նաեւ մերժեց այն տեսակետը, թէ ընտրութիւններու արդիւնքին պատճառը տնտեսական պայմաններն են, դիտելով, որ թեկնածու նախարարներուն մեծ մասը ընտրուած է:

Ան նաեւ հաստատեց, թէ ինք պիտի ներկայացնէ Լիբանանը՝ ՄԱԿի հաւաքամեակի ժողովին, որ կը սկսի վաղը, Նիւ Եորքի մէջ:

ՎԱՐՉԱՊԵՏ ՍԵՅԻՄ Հըսի տեղեկատուական գրասենեակը երէկ յայտարարեց, թէ վարչապետը սահմանադրական խորհուրդին յղուած նամակով մը հաղորդեց, որ իր ընտրական արշաւին համար ստացած է 273,932 տոյարի նուիրատուութիւն, որ անբողջութեամբ ծախսուած է:

### ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿԸ ԴՐՈՒՍԷ ԿԱՐՉԱՊԵՏ ՀՐԸ

Հանրապետութեան նախագահ Վալի Լահուտ երէկ հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցաւ վարչապետ Սեյիմ Հըսի եւ շնորհաւորեց անոր ժողովրդավարական եւ սահմանադրական կեցումը: Երեւոյի համալսարանի ընտրութիւններուն նկատմամբ: Նախագահ Լահուտ նաեւ դրուատեց Հըսի բարոյականութիւնն ու պատուաբեր անցեալը, որ կը վկայէն անխտիր բոլոր իրանահայերէնը:

### ՊՈՒԹՐՈՍ ՀԱՐՊ ԱՅՅԵԼԵՑ ՍՖԷՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Երեւոյի Պուրթու Հարպ երէկ այցելեց մարմնիներու ՍՖէյր պատրիարքին: Տեսակցութեան ասարտին ան յայտարարեց, թէ ընտրուած են երեւոյի համալսարանի ընտրութիւններուն վերաբերեալ հարցեր եւ ընդգծեց անհրաժեշտութիւնը ուժերը մեկտեղելու, մարտահրաւերները դիմագրաւելու համար:

**VARNA**  
 295\$ Bungalow  
 350\$ \*\* Hil.  
 425\$ \*\*\* Hil.

● 4 Սեպտեմբերի մեկնողներուն 7% գեղջ:  
 ● 11 Սեպտեմբերի մեկնողներուն 7 օրուան փոխան 11 օր կեցութիւն, ցաւե այցելութիւն Սոֆիա: ՄԱՍԿԱՍԻՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՔԱՐԱԿԱՆ ՈՐՈՒԿԻ ՄԵԿՈՒՄԵՐ ԴԵՊՈ ԿԱՆՆԱ

Պէճ կը ներփակուի օդանոսի տու, պահով (նախաժամով), փոխադրութիւն եւ գրաստանային սպասարկում:

**BALKAN HOLIDAYS SARL** Մագրաթ, Ուլաթ Էլ Ում 266, Audi Bank  
**TRANSLITEX TOURS** Կեդ. 05-393822/920429  
 01-304553/63

**A. T. N. ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՆԵՆ**

Վաղը, երէկեան ժամը 8:30ին, A. T. N. էն դիտեցեք 11էն 25 Օտոտոյի Ուրֆայի Հերոսամարտի 85ամեակի առթիւ, Հայաստանի եւ Արցախի մէջ տեղի ունեցած ձեռնարկներու եւ պայքարի տեսանկյունով, կազմակերպութեամբ Աշտեան թուրքի:

ԱճճԵԱՆ ԹՈՒՐԻՉԻ ՏՆՍՐԷՆՈՒԹԻՒՆ

**ԿԱՐՈ ՄԵՆԿԻՇԵԱՆ ԸՆԴ ՇՈՂԻԿ ՊՈՅԱԾԵԱՆ ԱՍՈՒՄԱՅԵԱԼԸ**

2 Սեպտեմբեր, 2000 Պէյրութ

### ԱԶԳԱՅԻՆ ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ (ՆՈՐ ՍԻՍ, ՇԵՆԱԶԱՅՆ 01-261115)

### «ՀԱՅ ԴՊՐՈՅԸ ՏՈՒՆՆ Է ՀԱՅՈՒՆ»

- ◆ 2000-2001 տարեշրջանի արձանագրութիւնները կը սկսին Երկուշաբթի, 4 Սեպտեմբեր 2000էն սկսեալ եւ կը շարունակուին ամէն օր առաւօտեան ժամը 9էն 12:
  - ◆ Վարժարան ունի մանկամտերի, մանկապարտէզի եւ նախակրթարանի (մինչեւ 6րդ) դասարաններ:
  - ◆ Նորեկ աշակերտները իրենց հետ պարտին բերել 2 լուսանկար եւ անճանաբար լուսապատճէն:
  - ◆ Երբեքեղը ապահովուած է բոլոր շրջաններուն համար:
- ՎԵՐԱՄՈՒՏ՝ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ, 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2000**
- ՏԵՕՐԷՆՈՒԹԻՒՆ**

**ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՀՐԱԺԱՐԵՅԱԻ**

Աշխատանքային համադաշնակցութեան նախագահ Էլիաս Ապու Ռըպը, որ թեկնածու էր Մերձալիւն - Հասալայի ուղղափառներու երեւոյի համալսարանի արժոյն, երէկ յայտարարեց, թէ կը հրաժարի աշխատանքային համադաշնակցութեան նախագահութենէն:

«Կ'ընդունիմ, որ պարտուած եմ, որովհետեւ քաղաքական կողմնորոշումը այժմային տնտեսական եւ ընկերային առաջադրանքներէն հզօր էր, Կը յարգեմ հարաւորներուն կամքը եւ շնորհակալութիւն կը յայտնեմ ինծի պօրավիզ կանգնողներուն», ըսաւ ան:

### ՎԱՐՉԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Հանդիպումին քննարկուեցան մշակութային, ինչպէս նաեւ տնտեսական գործակցութեան առնչուող հարցեր:

Վարչապետ Մարգարեան նշեց, որ Հայաստան եւ Սուրիա կը մնան բարեկամ եւ գործակից երկիրներ եւ անոնց կառավարութիւնները վըճուած են շարունակելու եւ խորացնելու գոյութիւն ունեցող աւանդութիւնները:

Վարչապետ Մարգարեան ըսաւ, որ պետք է աշխուժացնել հայ - սուրիական միջկառավարական յարաբերութիւնը, որ պիտի նախապատրաստէ երկկողմանի գործակցութեան ծրագիրը:

Անդրադառնալով մշակութային կապերու, վարչապետ Մարգարեան յայտարարեց, որ աշխարհի Սուրիոյ մէջ կայացող Հայաստանի մշակութի օրերը եւ նմանօրինակ ձեռնարկներու կազմակերպումը Հայաստանի մէջ կարելիութիւն պիտի ստեղծեն երկու ժողովուրդներուն աւելի մտեւ ծանօթանալու իրարու մշակութիւնը:

Սուրիոյ վարչապետ Մուսթաֆա Միրոյի ողջունները փոխանցելով, Մ. Հանուք նշեց, որ իր երկրին մէջ միշտ անկեղծ պագումներ եղած են հայ ժողովուրդին նկատմամբ: Ան իշեցուց նախագահ Պաշշար Ասատի այն յայտարարութիւնը, որ Սուրիա պիտի շարունակէ ցարդ վաճառ իր արտաքին եւ ներքին քաղաքականութիւնը: Ան վստահեցուց, որ Սուրիոյ իշխանութիւնները պատրաստ են խորացնելու Հայաստանի հետ իրենց յարաբերութիւնները: Ան ըսաւ, որ մշակութային աշխուժացումները ամուր հիմք կը ստեղծեն այլ մարպէրու մէջ արդիւնաւէտ գործակցութեան համար:

### ՀԱՅ ՍԻՏԵ. ԲՈԼԷԸ ՀԻՍՆՈՒԿ 1923ԻՆ, ՄԵՔՍԻԲ ՓՈՂՈՑ (Հեռ. 349816, Պէյրութ)

- 1.- Նորեկ աշակերտներու դիմումները կը շարունակենք ընդունել Սեպտեմբերի ընթացքին ամէն օր Երկուշաբթիէն Ուրբաթ. կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:00:
- 2.- 2000-2001 լրացուցիչ արձանագրութիւնները Մանկապարտէզի, Նախակրթարանի եւ Երկրորդական բաժնի համար տեղի կ'ունենան Հինգշաբթի, 28 Սեպտեմբեր եւ Ուրբաթ, 29 Սեպտեմբեր 2000ին կէսօրէ առաջ ժամը 8:30էն 12:30:
- Նախնական արձանագրութիւն կատարած նախկին աշակերտները պարտին վերահաստատել իրենց արձանագրութիւնը:
- 3.- Հոգաբարձութեան կարգադրութեամբ օթոպիլսի սոյասարկութիւն պիտի ունենանք բոլոր շրջաններուն համար:
- 4.- Բոլոր արձանագրութիւններէն, նախկին բէկոր, կը պահանջուի միասին բերել երկու փոքր լուսանկարներ:
- 5.- Նախնական արձանագրութիւն չըրած նորեկ աշակերտներ պարտին բերել լաւանած վերջին դըպրոցի վիճակագրոյցը, բարի վարուց վկայագիր, ինքնութեան բողոքի լուսապատճէն եւ Կրթական Նախարարութեան մօտ իրենց վաւերացուած քննարկները:
- 6.- Վերաքննութիւնները եւ նորեկներու մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան հետեւեալ կարգով, առաւօտեան ժամը 9:00էն սկսեալ, Երեքշաբթի 26 Սեպտեմբեր (Իգուական նիւթեր) եւ Զորքշաբթի 27 Սեպտեմբեր (Բուրբանութիւն եւ գլխական նիւթեր):
- 11րդ դասարանի վերաքննութիւններն ու դեպի 12րդ դասարան մուտքի քննութիւնները Զորքշաբթի 13 եւ Հինգշաբթի 14 Սեպտեմբերին են:
- 7.- Երկուշաբթի 2 Հոկտեմբեր առաւօտեան ժամը 7:40ին դասարաններէն կը սկսին:
- 12րդ դասարանի դասերը կը սկսին Ուրբաթ 15 Սեպտեմբերին:

**ՇՆՈՐԸԱԿԱԼՈՒԹԻՒՆ**

Պէյրութի Ուրֆայի Հայրենակցական Սիւնեան վարչութիւնը իր ջերմ գնահատանքը եւ շնորհակալութիւնը կը յայտնէ Աշտեան թուրք հաստատութեան տեր եւ տնօրէն պրոֆ. Յովսէփ Աշտեանին, իր բացառիկ եւ եզակի բժախնդրութեամբ կազմակերպուած աշխատանքին՝ Ուրֆայի Հերոսամարտի 85ամեակի առթիւ ուխտագնացութեամբ դէպի Հայաստան եւ Արցախ, 11էն 25 Օգոստոսին:

Առողջութիւն եւ նորամտ յաջողութիւններու մաղթանքով:

**ՈՐԲԱՅԻ ԸՆԹԵՆԱԿՅԱԿԱՆ ՍԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

# ՇԼՈՍՏ ՊԵՆ ԱՄԻ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՒՆԵՆԱՅ

Իսրայելի արտաքին գործոց նախարարի պաշտոնակատար Շլոստ Պեն Ամի երեկ գաղտնի բանակցություններ ունեցած է արտասահմանի մեջ, որում նպատակն է վերաշինուծացնել պաղեստինեհարայելեան բանակցությունները:

Իսրայելի Աշխատանքային Կուսակցության աղբիւրներ հաղորդեցին, որ նախարարի պաշտոնակատարը արտերկիր մեկնած է ամբողջական գաղտնապահությամբ, ան նյութիկ տեղեակ չէ պահած նախարարության պաշտոնէությունը:

Նոյն աղբիւրները հաւանական նկատեցին, որ Իսրայելի վարչապետ Էհուտ Պարաք է պաղեստինեան իշխանության նախագահ Եասէր Արաֆաթ Նիւ Եորքի մէջ ունենան հանդիպում մը, հսկայական անոր որ Պարաքի գրասենեակը երեկ հաղորդագրութեամբ մը հաստատեց, թէ նման տեսակցություն օրակարգի վրայ նկատի չէ առնուած:

Իսրայելի ձայնասփիռի պետական կայանը հաղորդեց, որ Պեն Ամի արտասահման մեկնած է տեսակցելու արաք պատասխանատուներու հետ, սակայն երկրին ամունը չճշդեց:

## ԺԻՆԱՏ ԿԸ ՄԵՐԺԷ ՊԱԿԻ ՓՈՔՐ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՀՐԱԻԵՐԸ

Պաղեստինեան իսլամական Ժիհադ շարժումը երեկ յայտարարեց, որ մերժած է ՊԱԿի փոքր խորհրդարանին ժողովին մասնակցելու հրաւերը: Իսլամական Ժիհադը, թէև ՊԱԿի անդամ չէ, սակայն հրաւիրուած է այն նիստին, որ պիտի քննարկէ պաղեստինեան պետութիւնը հռչակելու ծրագիրը: Նիստը պիտի գումարուի յառաջիկայ շաբթուան ընթացքին, Կապաի մէջ:

Պաղեստինեան Կեդրոնական Խորհուրդը, կամ փոքր խորհրդարանը ունի 129 անդամներ, որոնք բոլորն ալ ՊԱԿի պաշտօնատարներ են: Անոնց մէկ մասը կ'ապրի Կապաի եւ Այրլորդանանի մէջ, իսկ մաս մըն ալ՝ աքսորի մէջ:

Կապաի մէջ Իսլամական Ժիհադի ղեկավարներն՝ Մոհամէտ Հինտի ըսաւ, որ իսլամական իմբակը իր պատասխանը փոխանցած է պաղեստինեան իշխանութեան: Հինտի աւելցուց, որ Իսլամական Ժիհադը կը ուղղուած է ՊԱԿի վերատեսուծեան ենթարկելու Իսրայելի հետ խաղաղութեան բանակցությունները: Հինտի

ըսաւ նաեւ, որ Իսլամական Ժիհադ անցեալին ալ պոլիթիքի ենթարկուած է նման ժողովներու հրաւերները: Հինտի դիտել տուաւ, որ պետութեան հռչակման յետաձգումը արդէն իսկ որոշուած է եւ թէ փոքր խորհրդարանը պարզապէս այդ որոշումը պիտի յայտարարէ: Ան յայտնեց նաեւ, որ պաղեստինեան իշխանութիւնը պետք է արարտած յայտարարէ փոխանցման հանգրուանը եւ մերժէ անոր երկարաձգումը:

Իսլամական Համա կալմակերպութիւնը, որ նոյնպէս ժողովի մասնակցութեան հրաւեր ստացած է, տակաւին պատասխան չէ տուած:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ԱՆԿՆԵՐՍՏԻՆ

## ԹԱԼԵՊԱՆՆԵՐԸ ՅԱՐԶԱԿՈՂԱԿԱՆԻ Կ'ԱՆՑՆԻՆ

ԻՍԼԱՄԱՊԱՏ, 4 (ՌՈՅԹԸՐԸ).- Աֆղանիստանի մէջ իշխող Թալեպան իսլամական շարժումը երկուշաբթի օր յարձակողական անցաւ ընդ դիմադիր ղեկավար ԱՏՄՄՆ Շահ Մասուտի ուժերուն դէմ, հաղորդեց աֆղանեան լրատու գործակալութիւնը:

Յիշեալ աղբիւրը հաղորդեց, որ Թալեպանի ուժերը երեք կողմերէ յարձակում գործած են հիւսիսային շրջանին մէջ գտնուող Թալոքան քաղաքին դէմ: Ընդդիմադիր ճակատի բաները Մոհամէտ Հապիլ յայտնեց, որ Մասուտի ուժերը յաջողած են կասեցնել Թալեպանի գինեաներուն յառաջխաղացքը: Թալոքան, որ Տաճիկիստանի սահմանամերձ գոտիին մէջ կը գտնուի, ցարդ կը մնայ ընդ դիմադիր ուժերուն հակակշիռն ենթակայ: Անիկա բանայի դիրք ունի Մասուտի միջնաբերդը նկատուող Փանճէր հովիտին ճամբուն վրայ: Հապիլ աւելցուց, որ ընդդիմադիր ճակատը նախատեսած էր այս յարձակումը եւ պատրաստուած՝ անոր դէմ դնելու համար:

## ԵՐԿՐԱՇԱՐԺ ԶԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

5,2 աստիճան ռիկիլըր ուժգնութեամբ երկրաշարժ մը Կիրակի օր հարուածեց Քալիֆորնիոյ Նափա հովիտը, մէկ վրայուր եւ նիւթական վնասներ պատճառելով շրջանին մէջ: Երկրաշարժին պատճառով հազարաւոր բնակարաններէ ընդհատուած է ելեկտրական հոսանքը: Նիւփայի իշխանութիւնները ստիպողական վիճակի դրութիւն յայտարարած են: Քալիֆորնիոյ մէջ երկրաշարժներու ուսումնասիրութեան կեդրոնը յայտնեց, որ գլխաւոր երկրաշարժին յաջորդած են քանի մը յետցնցումներ, որոնք սակայն վնաս չեն պատճառած:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

# ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ ԱԻԱՐՏԵՑԱԻ

ԳԱՀԻՐԷ, 4 (ՌՈՅԹԸՐԸ).- Արաքական երկիրներու արտաքին գործոց նախարարները Երկուշաբթի օր Գահիրէի մէջ ամբողջութեամբ երկօրեայ ժողովը, կոչ ուղղելով, որ Միջին Արեւելքի խաղաղութեան բանակցությունները ընթանան հիմնուելով «հողի փոխարէն խաղաղութիւն» սկզբունքին վրայ:

Արտաքին գործոց նախարարներու ժողովի ամբողջութեամբ արաքական յայտարարութիւնը 4օրակցութիւն կը յայտնէր պաղեստինցիներուն, որոնք վերջնական կարգավիճակի գծով բանակցություններ կը կատարեն Իսրայելի հետ խաղաղութեան բանակցությունները: Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթ նախարարաց ժողովին արտասանած իր խօսքին մէջ ըսած էր, որ պաղեստինցի ժողո-



Եասէր Արաֆաթ, Իսմաթ Ապտէլ Մեկիտ (կեդրոնը) եւ Սոմալիի Գործնորդ Գախազահ Հասան, խորհրդաժողովի անարտի:

վորդին պահանջն է ունենալ անկախ պետութիւն մը, որուն մայրաքաղաքը ըլլայ Երուսաղէմը:

Արաք նախարարներուն կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը հաստատէր նաեւ, որ Երուսաղէմ բանալին է խաղաղութեան վերջնական ու ամբողջական համաձայնութեան մը: Արաքական աշխարհը կը պահանջէ, որ խաղաղութիւնը հիմնուած ըլլայ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի վորթեան Խորհուրդի թիւ 242 որոշումին վրայ, որ կը հաստատէ,

թէ բոնի ուժով ուրիշի մը պատկանող հողերը գրաւելը անընդունելի է: Նախարարները կոչ ուղղեցին Ապահովութեան Խորհուրդին մնայուն անդամ երկիրներուն, որ ճանաչում տան պաղեստինեան պետութեան մը, որուն մայրաքաղաքն է Երուսաղէմը:

Ժողովի անարտի որդեգրուած բանաձեւերէն մէկը կը հաստատէր, որ Իսրայել օրինական, բարոյական եւ քաղաքական պարտաւորութիւն ունի պաղեստինցի գաղթականներուն հանդէպ:

### ԻՐԱՆ - ԻՐԱԲ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՉԳՎՆՈՒՆԻՆ ԶՄԱՆԱՄԵԱԿԸ ՆՇԵԼՈՎ

## ԻՐԱԲ ԽՍՏԻԻ ԿԸ ՔՆՆԱԳԱՏԷ ԹԵՀՐԱՆԸ

ՊԱՂՏԱՍ, 4 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրաք երկուշաբթի օր մէջ Իրանի հետ պատերազմի ազդեցութիւնը քստակալը: Խիստ ռոնով դատաւարտելով Թեհրանը եւ գալն նկատելով որ արմատապէս փոխուած է:

«Քատիսախ» օրաթերթը կը գրէր, որ արխիւներուն մէջ գտնուող փաստաթուղթերը կ'ապացուցեն, թէ Իրան նախարարական եղած է, լայնածիր յարձակում մը ձեռնարկելով Իրաքի դէմ, 4 Սեպտեմբեր 1980ին: Օրաթերթը կ'աւելցնէր, որ երբ Իրան մերժեց իրաքեան միջազգային աւելի քան 215 իրաւադարար նախաձեռնութիւններ, Իրաք պարտաւորուած եղաւ հակադարձելու:

Կառավարութեան պաշտօնաթերթը «ժումհուրիա» կոչ ուղղեց Թեհրանին մոռնալու անցեալը եւ փոխ յարաբերութիւններուն նոր էջ մը բանալու Պաղեստինի հետ: Օրաթերթը աւելցուց, որ կան կարգ մը կետեր, որոնց գծով համակարծիք են Իրաք եւ Իրան, հետեւաբար անոնք կրնան մեկտրի դնել իրենց տարակարծութիւնները եւ նոր էջ բանալ: «ժումհուրիա» սակայն շեշտեց, որ երկու երկիրներուն միջեւ կապերը բնականոն կը դառնան, երբ Թեհրան ազատ արձակէ իրաքցի գերիները, ինչպէս նաեւ վերադարձնէ իրաքեան օդանավերը, որոնք Մոցի պատերազմին Իրան ապստամբած էին: Թեհրանը ցարդ չէ վերադարձուցած այդ օդանավերը, անիկա կը պնդէ նաեւ, որ ազատ արձակած է իրաքցի բոլոր զինուորները:

«ՔԱՏԻՍԱԽ» անհիմն ու շինծու նկատեց ամերիկեան տեղեկագիր մը, ըստ որուն Իրաք կրնայ հրթիռներ արձակել Իրաքի վրայ: «Քատիսախ»

աւելցուց, որ Միացեալ Նահանգներ ու Իսրայել չեն ձանձարակարգելու յայտարարութիւնները կատարել:

Ամերիկեան աղբիւրներ անցեալ շաբթուան մէջ հաղորդած էին, թէ Ուաշինկթըն եւ Իսրայել մտահոգ են, որ Մասուտ Հիւսէյն կրնայ հրթիռներ արձակել Իսրայելի վրայ:

### ՄԱԿԻ ՀԱՉՍՐԱՄԵԱԿԻ ՎԵՂՎՈՒՆՈՒՆՈՒՆ ՍԵՆՏԻԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ ՊԻՏԻ ԱՐԾԱՐԺԷ ԶԱՐԻՂԻ ՍԱԿԵՐՈՒ ԶԱՐՅԸ

## ՌԻՍ, 4 (ՌՈՅԹԸՐԸ) - ՍԵՆՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ԳԱԽԱԺԱՆԱԳ ԻՆՏԵՆՍԻՎԱՆ ՄԱԿԻ ՄԷՋ ԱՅՆ շաբաթ պիտի յայտարարէ, որ Ռիստ պիտի աշխատի քարիւղի կայուն սակեր հաստատելու, հաղորդեց սենտակաւն օրաթերթը մը Երկուշաբթի օր:

«Ուքալ» կը գրէր, որ Ապտալի իշխանը ՄԱԿի «նպարամեակի վեհաժողովին արտասանելիք իր խօսքին մէջ շեշտը պիտի դնէ Սենտակաւն Արաքիոյ արտաքին քաղաքականութեան հիմնական սկզբունքներուն վրայ: Ան նաեւ պիտի ընդգծէ, որ Ռիստ կ'ուզէ, որ հաստատութիւն մը հաստատուի աշխարհի տարբեր ժողովուրդներուն շահերուն միջեւ: Այս ուղղութեամբ Ապտալի իշխանը պիտի յայտնէ, որ Սենտակաւն Արաքիա կ'աշխատի քարիւղի կայուն սակեր հաստատելու եւ համաշխարհային արտաւորութեան քարգաւազման օժանդակելու համար:

### ԸՆԴԳԻՍՏԻՎՈՒՆՆԵՐՈՒՆ ԴԵՄ ՊԱՅՅՈՒՐԻՆ ՄԷՋ

## ԽԸՐԽԸՉԻՍՏԱՆ ԿԸ ԾՐԱԳՐԷ ՕԴՈՒԺԸ ԳՈՐԾԻ ԼԾԵԼ

ՊԻՇԷԷԷ, 4 (ՌՈՅԹԸՐԸ) - Խըրխըլիստան յայտարարեց, որ օդուժը պիտի ուժեղանայ իսլամական ընդդիմադիր դիրքեր, ուրկէ անցեալ շաբաթավերջին պիսեալներ յարձակած էին բանակին վրայ: Ապահովութեան Խորհուրդի քարտուղար Պոլոք Ճանուլաքով ըսաւ, որ կառավարութիւնը լրջօրէն կը քննարկէ ընդդիմադիրներուն հակակշիռն տակ գտնուող լեռնային անցքերը ուժեղացնելու ծրագիրը: Ճանուլաքով աւելցուց, որ յատուկ արշալի մը պիտի ձեռնարկուի ընդդիմադիր ուժերուն կեդրոններուն դէմ:

Օգոստոսին ի վեր 27 պիստոններ սպաննուած են ընդդիմադիր ուժերուն հետ բախումներու ընթացքին: Կառավարութեան աղբիւրներու համաձայն ընդդիմադիր ուժերն ալ աւելի քան հարիւր զոհ տուած են:

### ՌՈՒՍԻԱ

## ԵՐԿՈՒ ՆՈՐ ՊԱՅԹՈՒՄՆԵՐ

Ռուսիոյ տարածքին իսպանաարաբական պայթումները եւ արարքները կը շարունակուին: Երեկ երկու նոր պայթումներ տեղի ունեցան, առաջինը՝ Կեդրոնական Ռուսիոյ Ռիպլան քաղաքին մէջ, երկրորդը՝ Մէն Փեթերսպուրկի մէջ: Ռիպլանի պայթումը տեղի ունեցաւ առաւօտեան կանուխ ժամերուն, շուկային մէջ եւ խլեց երկու զոհ եւ աւելի քան չորս վիրաւոր:

Բարձրաստիճան կարգ մը պաշտօնատարներ արարքին ետին կը տեսնեն նաեւ չեչէն ընթացողներու մատներ, սակայն պաշտօնական աղբիւրներ, որոնց կարգին ներքին գործոց նախարար Վլադիմիր Ռուշայլո կ'ըսէն, թէ անիկա կրնայ տեղական ինստիտուտներէ վրէժխնդրութեան հետեւանք ըլլալ: Հինգ կասկածելի ձեռքարկուած է եւ կը հարցաքննուի:

Իրաք-Թասս րատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Ռուշայլոյի համաձայն, արարքը ոչ մէկ կապ ունի ահաբեկիչներու հետ:

Աւելի ուշ, երկրորդ պայթումներու մը տեղի ունեցած է այս անգամ Մէն Փեթերսպուրկի մէջ: Ռուսները վերադարձուած է հագուստի վաճառատան մը մէջ, զոհ եւ վիրաւոր չկայ, այլ արձանագրուած է միայն նիւթային վնաս: Այս արարքին գծով ռուսական պատկան մարմիններ ոչինչ կը հաղորդեն, սակայն ըստ կարգ մը աղբիւրներու, անիկա մաքսի միջեւ հարց է եւ ոչ մէկ կապ ունի չեչէն կամ այլ խմբակներու հետ:

(ՌՈՅԹԸՐԸ, ԵՈՒՐՈՆԻՈՒՅ)

## ՄԵԱՆՄԱՐԻ ՄԷՋ ԸՆԴԳԻՍՏԻՎՈՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՃՆՇՈՒՄԸ ԿԸ ՍԱՍՏԿԱՆԱՅ

ԵԱՆԿՈՆ, 4 (ՌՈՅԹԸՐԸ) - Ոստիկաններ Երկուշաբթի օր պաշարեցին Միանմարի ընդդիմադիր շարժումի կեդրոնատեղին: Մինչ այդ Միանմարի պիստոլակաւ իշխանութիւններուն դէմ, ընդվզումի ու բողոքի միջազգային ալիք մը բարձրացած է՝ ընդդիմադիրներուն շրջապակով երթում արշալիս համար:

Դիւանագետներ յարոնեցին, որ ժողովրդավարութեան համար ազգային լիկայի ղեկավարները բնակարանային կալանքի տակ կը գտնուին: Յիշեալ աղբիւրներուն համաձայն իշխանութիւնները խլած են նաեւ հեռաձայնային գիծերը, որպէսզի կարելի չըլլայ հաղորդակցություն ունենալ ղեկավարներուն հետ: Դիւանագետները աւելցուցին, որ ժողովրդավարական շարժումի ղեկավար Անկ Սան Սու Քիի եւ այլ ղեկավարներու հետ ունեցած են տեսակցություն ունենալ, սակայն իշխանութիւնները արգիլած են: Կառավարութիւնը հերքեց, որ Սուքի եւ ընդդիմադիր այլ ղեկավարներ բնակարանային կալանքի տակ են: Անիկա հաստատեց, սակայն, որ անոնց գործունեութիւնը արգիլուած է: Սու Քիի ղեկավարած շարժումը ջախջախիչ յաղթանակ ապահոված էր 1990ի ընտրություններուն, սակայն իշխելու արտօնութիւն եւ իրաւունք չէ ստացած: Սու Քի, անոր վարորդն ու 14 այլ ղեկավարներ Շաբաթ օր բոնի ուժով իրենց բնակարանները վերադարձուած էին, ինք օր իրենց ինքնաշարժներով Եանկոնի մուտքին մնալէ ետք, իբրեւ բողոք իշխանութիւններուն դէմ:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան յայտնեց, որ մտահոգ է Միանմարի իրադարձություններով եւ յատկապէս՝ խօսքի եւ քաղաքական տեսակետի ապստոնութեան դէմ որդեգրուած միջոցառումներուն համար:

Միանմարի կառավարութիւնը քննադատութեան ենթարկուեցաւ Միացեալ Նահանգներու, Բրիտանիոյ, Աւստրալիոյ, Նոր Զելանտայի եւ այլ երկիրներու կողմէ:

## ԼՈՒՔԱՇԵՆՔՕ ՀԱԻԱՆԱՅԻ ՄԷՋ

Լուրջ լուրեր Նախագահ Ալեքսանտր Լուքաշենքո չորսօրեայ պաշտօնական այցելութեան համար Քուպայի մայրաքաղաք Հաւանա կը գտնուի, ուրկէ այսօր կ'ուղղուի Կիւբա, մասնակցելու համար ՄԱԿի հազարամեակի վեհաժողովին:



Լուքաշենքո հաւանայի մէջ ճեղգափոխութեան Հրապարակին վրայ հանդիսութեան մը ներկայ գտնուեցաւ, որուն ընթացքին Քուպայի նախագահ Ֆիդել Քասթրո գալն պարգեւատրեց «Ռոսկ Մարթի» շքանշանով: Միւս կողմէ, քուպացի պաշտօնատարներ հաղորդեցին, որ Քասթրո եւ կը ծրագրէ մեկնել Նիւ Եորք մասնակցելու վեհաժողովին: Ան եթէ մեկնել Միացեալ Նահանգներ, առաջինը պիտի ըլլայ 1995էն ի վեր:

# ԵՒՐՈՍՏՐՈՒՄ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻ ԱՇՆԱՆ

Ինչպես նախապես հաղորդած էինք, այս տարւան 28 Յունիսի Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի լիազուտարձուտաշրջանին քննարկուած է Հայաստանի եւ Աւելըրայէնի անդամակցութեան հարցը:

Ընդգծելով պալի յառաջընթացը մարդկային իրաւանց պաշտպանութեան եւ Եւրոխորհուրդի չափանիշներուն երկիրներու օրէնսդրական դաշտի համապատասխանեցման քննադատներուն մէջ, եւ այն, որ Հայաստանի եւ Աւելըրայէնի անդամակցութիւնը փոխադարձ վստահութիւն կրնայ ստեղծել Լեոնային Ղարաբաղի տագնապի խաղաղ կարգաւորման համար, խորհրդարանական վեհաժողովը կողմ քուէարկած է երկու երկիրներուն Եւրոխորհուրդի անդամակցութեան:

Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի պատգամաւորներուն ձայները բաշխուած են հետեւեալ կերպով. կողմ՝ 123, դէմ 0, ձեռնպահ՝ 7:

Այս առնչութեամբ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան հասարակութեան հետ յարաբերութիւններու վարչութիւնը կը յայտնէ, որ խորհրդարանական վեհաժողովին եզրակացութիւնը փոխանցուած է Եւրոպայի խորհուրդի նախարարներու յանձնախումբին, որ այս տարուան աշնան պէտք է ընդունի կազմակերպութեան Հայաստանի լիիրաւ անդամ դառնալու վերաբերող վերջնական որոշումը:

Իսկ նախարարներու յանձնախումբին առաջին հանդիպումը նախարարներու պատուիրակներուն մակարդակով տեղի պիտի ունենայ 6 Սեպտեմբերին Սթրասպուրկի մէջ:

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՄՕՏ 16 ԱՌ ՀԱՐԻԻՐԸ ՉՈՒՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԵՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Երեւանի քաղաքնախորհրդի կրթութեան վարչութեան կողմէ կատարուած ուսումնասիրութիւններու արդիւնքներուն համաձայն, 1999 - 2000 կրթական տարեշրջանին ընթացքին հանրակրթական հաստատութիւններուն մէջ աշխատող ուսուցիչներու կրթական մակարդակը ցոյց կու տայ հետեւեալ պատկերը. բարձրագոյն կրթութիւն ունի 11,5% ուսուցիչ, թերի բարձրագոյն կրթութիւն՝ 13,5, միջնակարգ մասնագիտական կրթութիւն՝ 1,784, բարձրագոյն կրթութեամբ օժտուած, բայց ոչ մասնագէտներ (անցած են վերապատրաստման դասընթացներ՝ 292):

Այս թիւերէն ի յայտ կու գայ, որ ուսուցիչներու ընդհանուր թիւին մօտ 16 առ հարիւրը չունի բարձրագոյն եւ մասնագիտական կրթութիւն, այս մէկը այն պարագային, երբ Հայաստանի մանկավարժական հիմնարկներու աւելն տարուան շրջանաւարտներուն թիւը կը գերազանցէ դպրոցներու պահանջը:

Կրթութեան վարչութեան պատասխանատու Սիլվա խրիսեանը քսաւ, որ դպրոցները մերկայիս կարիքը ունին յատկապէս պատմութեան, աշխարհագրութեան, մարմնակրթութեան եւ աշխատանքի ուսուցման մասնագէտ-ուսուցիչներու:

Այդ նպատակով կրթութեան վարչութիւնը դիմած է խաչատուր Արքովեանի անունաւ համալսարանի եւ մարմնակրթութեան հիմնարկի տնօրէններուն՝ մտր կրթական տարուան ընթացքին վերափոխելու առարկաներու մասնագէտ-շրջանաւարտները դպրոցներ գործուղելու խնդրանքով:

## ԴՊՐԵՎԱՆԵԻ ՆՈՐ ՍԱՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Դպրեվանքի տեսչութիւնը ուրախութիւնը ունի յայտարարելու, որ ուսումնական-կրթական 71րդ տարեշրջանի լրացուցիչ արձանագրութիւնները տեղի պիտի ունենան 6ԷՆ 13 Սեպտեմբեր 2000ին, կաթողիկոսարանին մէջ, Աճթիլիս, առաւօտեան ժամը 9:00էն 13:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Անոնք, որոնք կը փափաքին Դպրեվանքի սան դառնալ եւ վեցերորդ դասարանը աւարտած են, տեսչութեան կրնան ներկայանալ իրենց ծնողքին հետ, բերելով.-

Ա.- Նախորդ տարուան վիճակագրոյցի ու վկայագիրի և լուսապատճենները:  
Բ.- Զահանայ հօր եւ դպրոցի տնօրէնութեան կողմէ բարի վարուց վկայագիրները:  
Գ.- Բժշկական վկայագիր մը:  
Դ.- Անճնաթուղթի կամ «Իխրաթ քայտ» լուսապատճենը:

Ե.- Անճնաթուղթի երեք գունաւոր լուսակար:  
Մուտքի քննութեան ներկայացող թեկնածուի Թղթածրարը ամբողջական պէտք է ըլլայ:

Յաւելեալ մանրամասնութեան համար դիմել.-  
Կաթողիկոսարան (հեռ. 04-410001 կամ 410003)  
Ազգային առաջնորդարան (հեռ. 01-258300)  
Դպրեվանք (հեռ. 04-983634 կամ 983635)

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԿՐԹԱՎԱՆՈՒՑ

## Ս. ԲԱՐԱՅԵԱՆԻ ԵՒ ՄԻԿԱ ԱՄԲԱՍԱՆԵԱԼՆԵՐՈՒՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ՝ 18 ՍԵՊՏԵՄԵՐԻՆ

22 Մարտի քրկական գործով ամբաստանուած Լեոնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակի նախկին հրամանատար Սամուէլ Բարայեանի եւ միւս տասնհինգ ամբաստանեալներուն դատավարութիւնը պիտի սկսի 18 Սեպտեմբերին, Ստեփանակերտի դատարանին մէջ: Դատավարութեան պիտի նախագահէ դատաւոր Սուրէն Ալեքսանեան:

Ս. Բարայեանի պաշտպան փաստարան Ժ. Շաքարեան յայտնած է, թէ 30 Օգոստոսին իր բացակայութեան տեղի ունեցած նիստին ընթացքին դատաւորը որոշած է Ս. Բարայեանի դատավարութիւնը Հայաստանի որեւէ դատարանին յանձնելու իր առաջարկ մերժել: Շաքարեան ըսած է, թէ Լեոնային Ղարաբաղի քրկական դատավարութեան օրէնսդրութիւնը 221 յօդուածը իրեն կարելիութիւն կու տայ նոյն միջնորդութեամբ Հանդէս գալու նաեւ դատարանին մէջ. բան մը, որ կը ծրագրէ ընել:

## ՍՈՒՐԻՈՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՅԵԼԵՅ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

1 Սեպտեմբերին Հայաստանի Ազգային ժողովի գլխաւոր, կրթութեան, մշակույթի եւ երիտասարդութեան հարցերու յանձնախումբի նախագահ Ծ. Քոչարեան հանդիպում ունեցած է պաշտօնական այցելութեամբ Հայաստան գտնուող Սուրիոյ մշակույթի նախարար Մահա Հանուրիի հետ:

